Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

28 ԺԿ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

ՆԻԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ԵՒՐՈՊԱՅԻ
ՈՒՍՄԱՆՈՂԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆ

1903. ԺԸՆԵՎ

391.99
Ղ-29

3413
891.99 | Դամբարձումյան
Դ-29 | Հրատարակություն
Երգեր
3124 | 16/-1

Հրատարակութիւն

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Տրաքիրը ապրած է տուն մնաց)

19 NOV 2011
891.99
Դ-29

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

(Հեղինակի պատկերով)

Հրատարակութիւն
ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԺԸՆԵՎ

1903

18.07.2013

49719

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ
(ԴԱՖԱՅԵԼ, ՊԱՏԿԱՆԵԱՆ)
1830—1892

ՀԻՄԻ Է՞Լ ԼՌԵՆՔ...

—

Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի է՞լ
Երբ մեր թշնամին իր սուրն է դրել
Իր օրհասական սուրը մեր կրծին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին.
Ասացէք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք։

34413

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ և՛ խօսք և՛ զէնք.—
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,
Ա՛յդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,
Վա՜յ մեզ, շղթայով կապած գերի ենք,—
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին՝
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,

Աղէխարշ բողոք վաղուց ապիրատ.
Մեր գլուխ լալու Եփրատ ուր պըտռենք,—
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից,
Պանդուխտ, հալածեալ, եղբարք, ուր գիմենք.
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Անհոգ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նզոված ձեռքը կարկառեց—
Ազգութեան վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մեծ է, ինչ անենք,—
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր Եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գառնազգեստ գայլին մեզ գլուխ դրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ ուր աղօթենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք՝ մարդիկ ինչ կ'ասեն։
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն.
Չե՞ն ասիլ, որ Հայք արժանի էին
Այդ սարբկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,—
Մինչև երբ լռենք։

Թող լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցը է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք—
Ու այնպէս լռենք։

1861

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ ԵՐԳՈՒՄ Է

—

Հայկ ու Լեւոնին մուռանանք, եղբարք,
Թափ տանք մեզանից փոշին հնութեան,
Վերածնենք մեր մէջ նոր կեանք ու նոր բարք,
Կեցցէ՛ շատ օրեր մանուկ-Հայաստան։

Կեցցէ՛ շատ օրեր մանուկ-Հայաստան,
Նա՝ որ դեռ միայն մեր սրտի խորքում
Ունի իւր հիմքը. ոչ տուն, ոչ կայան
Չունի տակաւին բուն Հայաստանում։

Եղբա՛րք, բանը դեռ անշօշափելի
Այժմուս մեր մտքին՝ ցնորք չի կարծենք։
Բանը կ'մարմնանայ ու տեսանելի
Կը լինի շուտ, միայն մենք վստահ լինենք։

Մեր յոյսը միայն մեր վրայ լինի,
Չեն պէտք մեզ նպաստ մեծատուններին,
Ողորմութեամբ թող մուրացիկն ապրի,
Մուրացողն միշտ ստրուկ է օտարին։

Կեցցէ Հայաստան, որ երազական
Կարծում են ծերերն. իրօք չէ այդպէս.—
Մեր հայրենին դեռ չէ չուառական,
Քանի որ ունի քաջ որդիք մեզ պէս։

Բաւ է, օտարին շատ ծառայեցինք,
Սրկի վիճակն չէ յաւերժական,
Ազատութեան գինն մենք քաջ սերտեցինք,
Էլ չենք հաւատալ օտարի խոստման։

Օտարի շահը թոյն է մահաբեր,
Աչք է կուրացնում, միտք է պղտորում,
Գերի է դարձնում մարդ ազատասէր,
Ոսկի շղթայով ձեռք ոտք է կապում։

Կը փշրեմ շղթաս, կ'երթամ Հայաստան,
Կը պագնեմ նորա հողը անարատ,
Կ'ասեմ. „Եկել եմ որդիդ չուառական,
Գրկիդ մէջ ինձ ա՛ռ, մայր իմ հարազատ։

Զուրկիմ ես ոսկի, այլ ոսկու մագան,
Ջլուտ ձեռք ջուխտակ ու սիրտ անվեհեր,
Ձեռքումս ունիմ բահ ու հրացան,
Սրտումս ունիմ աղնիւ խորհուրդներ։

Քու հողն արգաւանդ, ես մշակ արի,
Մենք հաշտ կու ապրինք շատ ու շատ տարի.
Ուրջուներէդ քեզ ոչինչ շահ չըկայ,
Թո՛յլ տուր, որ բռնի հալածեմ նոցա։

Դու որդիք ունիս չորս միլիոն ու կէս,
Թէ յանկարծ գաղթեն՝ նոցա տեղ ունես,

Ստինքիդ կաթը խնայէ օտարէն,
Գալու որդիքդ քաղցած, ծարաւ են...“

Հարաւ, հիւսիսէն փոշի վերացաւ...
Զայն, տրոփ, խօսք, շշուկ զիլ զիլ լսուեցաւ...
Մասսայ ճակատէն մէգը հեռացաւ...
Մանուկ—Հայաստանն ոտքի կայնեցաւ...

1862

ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարթիր, մանուկ իմ նազելի, բա՛ց այդ պայծառ աչերը.
Թերթերունքէդ քունը թօթուէ, գիրկը հանգի՛ր քու մօրը,
Բաւ քեզ ոլքան բարի հրեշտակք հեքեաթ ասին երազում,
Այժմ արի՛ քեզ այն պատմեմ, ինչ պիտ' տեսնես աշխարում։

Զարթիր, որդեակ, քանի՞ քնես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեւն է տեսնում։

Դուն կը մեծնաս, բոյ կը քաշես—չինար բոյիդ ես ղուրբան,
Քեզ այժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան.
Իմ մտաներով մի ոսկեթել մէջքիդ գօտի եմ կարել,
Գօտիիցդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ սրել։

Զարթիր, որդեակ, քանի՞ քնես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,

Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեւն է տեսնում։

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է ճեռում անհամբեր,
Զարթիր որդեակ, քանի՞ քնես, ա՛ռ քու թուրը մահաբեր.
Քու Հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը շղթայած,
Քու եղբայրը գերուԹեան մէջ...քա՛ջ, միայն դո՞ւ ես քնած...

Զարթիր, որդեակ, քանի՞ քնես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեւն է տեսնում։

Չէ, իմ որդին շուտ կը զարթի, ձին կը հեծնէ սանձակոծ,
Հայի արցունքը կը սրբէ, կը դադրեցնէ լաց ու կոծ.
Հա՛յ եղբայրներ, քիչ էլ կացէք, իմ Աղասին զանԹեցաւ,
Գօտին կապեց, Թուրը կախեց ու իր նժոյգ ձին նստաւ։

1862

ԹԷ ԻՄ ԱԼԵՒՈՐ ՀԵՐՔՍ ՍԵՒՆԱՅԻՆ...

—

Թէ իմ ալեւոր հերքս սեւնային,
Այժմ ինձ յետ գար, կորիճ դառնայի,—
Նժոյգ ձի նստած, պեխս ոլորած,
Ձեռքս Թուր առած ես դաշտ կ'երԹայի։
Ես դաշտ կ'երԹայի—դաշտն Աւարայրի,
Ողողած ցօղած Հայոց արիւնով,
Ա՛զգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քու կորցրած Թագը քեզ հետ կուտայի։

Կ'ասէի Հայոց օրիորդներին.
„Ծախեցէք հագի ձեր Թանգ շորերը,
Թողէք պաճուճանք, զարդ, մարգարիտներ—
Ժանգոտած ու գուլ են մեր Թրերը։
Տուէք բեհեղեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաԹաԹենք մեր մարմնու վէրքը,
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից,—
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը“։

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,
Սնդուկներս լի ոսկով, արծաԹով,—
Շատերու նման ես չէի լինիլ
Երբէք ազգասէր ունայն խօսքերով.
Շամպանեա գինու, Աննա խաչի տեղ՝
Կ'առնէի առատ գնտակ ու վառօդ,
Արձակ համարձակ կ'երԹայի հանդէպ
Հայատեաց ազգին անԹիւ զօրքերով։

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման.—
Շուտաքայլ երԹալ դէպի Հայաստան,
Խղճուկ Հայ ազգին լինել օգնական.
Եւրոպ՝ Ասիա արեան գետերը
Կը վազեցնէի հեղեղի նման,
Մինչև որ Թագ, գահ ու ազատ կրօն
Ինձնից չըստանար Թշուառ Հայաստան։

Բայց՝ եԹէ մի օր, մի ժամ, մի բոպէ
Աստուած լինէի մեր հողագընտին,
Ի՜նչ սուր սլաքներ պիտի շաղ տայի
Մեր արիւնարբու Թշնամեաց գնդին.
Նենգ... Թուրք մոլի, Պարսիկ ոխերիմ,

Դարևոր ոսոխ դու Յոյն կրօնամոլ,
Գիտցիք, որ իմ սուր երկսայրի սրից
Անվնաս չէր մնալ ոչ մի ձեր որդին։

1862

ՎԱՆԵՑՈՑ ԱՂՕԹՔԸ

—

Տէր, ողորմեա՛, Հայոց աղգին,
Տո՛ւր զօրութիւն մեր թոյլ բազկին,
Հալածէ՛ դու անգութ Տաճկին.
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Շնորհեա՛ մեզ մէկ քաջ զօրավար,
Ժողովիլ Հային միագումար,
Մարտընչեցնել կրօնի համար.
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Թո՛ղ դադրի մեր գերութիւնը,
Յառնէ Հայի աղգութիւնը,
Վերջանայ մեր հեգութիւնը,
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Ցիշեա՛ զմեզ, Տէր, այս անգամը,
Ունայն չանցնի պատեհ ժամը,
Հայքս ալ աղգաց 'ղանք անդամը
Տէ՛ր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Տէր, թէ այժմ ալ չես ողորմիլ,
Ա՛լ Հայիս մէկ բան չի օգնիլ,

Մեզ կը մնայ ջուրը ընկնիլ.
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Ապա՝ թշուառ եղբայր Հայեր,
Ձեռքերս առնուանք մէկ մէկ սուսեր,
Դրօշակ բանանք, փչենք փողեր,
Տէրըն խղճաց ի վերայ մեր։

1877

ՄՇԵՑՈՒ ՀԵԿԵԿԱՆՔԸ

—

Վիզերս ճկած՝ սրտով խոնարհ ենք,
Տիրասէր հպատակ լինինք ու ծառայ,
Նորա անունը աղօթքով յիշենք,
Խղճուկ Հայ աղգիս գուցէ մեղքանայ։

Քրտինք—վաստակի մեր տասանորդը
Տանք նորա զօրքին, որ նա կշտանայ,
Ըլլանք սուլթանի մտերիմ ճորտը,
Խղճուկ Հայ աղգիս գուցէ մեղքանայ

Թո՛ղ նա մեր որդոց անմեղ արիւնով
Հաճոյքի համար սուրը լըւանայ,
Սրտերուս կսկիծն զսպենք խնամքով,
Խղճուկ Հայ աղգիս գուցէ մեղքանայ,

Թո՛ղ պարկեշտասուն մեր աղջիկներով
Սուլթանի տուփոտ պասքը յագենայ,

Մեր ոսկին սէրայ տանինք փէշերով,
Խղճուկ հայ աղգիս գուցէ մեղքանայ։

Ցուցնունք որ հայը չէ Տաճկին ոսոխ,
Այլ բարեացակամ՝ սերտ ընկեր է նա.
Նորա գովողն է և ոչ չարախօսող,
Խղճուկ հայ աղգիս գուցէ մեղքանայ։

—Լուռ կաց, խեղճ հայ մարդ. մնոտի յոյսեր
Քեզ շատ խաբեցին. էլ մի հաւատալ.
Կ՚անցնին ու կ՚երթան շատ ու շատ դարեր,
Հայ աղգիս վրայ թուրքը չի խղճալ։

Ինչո՞ւ կը մոռնաս Փրկչի ասածը.
„Դուռը չի բախած՝ ոչ ոք չի բանալ„,
„Ո՞վ ստացել է իւր չի հայցածը“,—
Հայ աղգի վերայ թուրքը չի խղճալ։

Աղատ ըլլալ կ՚ուզես, գիտեմ փափագդ,
Բայց դու մի յուսալ հասնիլ այդ օրին.
Ո՞ւր է, դու գիտես, բաղդդ ու փառքդ
Ու աղատ կեանքդ։—Ի ծայր քո սուրին...

1877

ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

—

Պզտի՛ տղայ, չեմ օրօրիլ օրօրանքդ, որ քուն 'լաս,
Հայ աղբարքդ ոտքի ելան, մենակ դո՞ւ ետ պիտ մնաս.
Զարթէ՛ հոգիս, անուշ քունէդ, թող աչքերդ լուս տեսնին,
Արևմուտքէն արև ծագեց, բաղդը բանեց Հայ աղգին։

Չար սուլթանի ոսկի թախտը ջարդուեցաւ, վար ինկաւ,
Թախտի տակէն հազար աղգաց ազատութիւն ծագեցաւ։
Ով որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գտնէ,
Սիրուն որդիս միթէ մենակ չար լուծի տակ պիտ՚ մնէ։

Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողագին ու լացինք,
Աղի աղի արտասուքով ձեռք ու ոտը լուացինք.
Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի հայերուն,
Այժմ նայինք, նա կը լսէ՞ շառաչիւնը սուրերուն։

Տո՛ւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ,
Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դնեմ.
Սարուկ գնա արեան դաշտը, վերադարձիր ազատուած,
Արդեօք մի օր պիտի լսե՞ս մեր խնդիրքը, ո՛վ Աստուած։

1877

ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃԸ

—

Հազիւ լրացաւ քսանըմէկ տարիս,
Աղուամազ բուսաւ երես ու ծնոտիս,
Թշերէս կարմիր վարդեր կը կաթի,
Ջիլերս ամուր՝ ասես երկաթի։

Տէ՛ք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ, ասէ՛ք, ի՞նչ անեմ։

Առջևս դրէ՛ք մարդ հարիւր ու հազար,—
Ջարդեմ տրորեմ ղերդ բողկ ու գազար.

Ինչ այլք շաբթու մէջ՝ այն ես օր կանեմ..
Մէջս այդքան ոյժ, ասէք ինչ անեմ,

Իմ պէս բիւրերով լի է Հայաստան,
—Նրա սուրբ հողին ըլլեմ ես զուրբան—
Մարմինը ուժեղ է՝ առոյգ է Հային,
Այլ ափսոս, թմրած է նորա հոգին։

Թէ մի օր զարթի նորա վեհ հոգին,
Նա պարզ կը ցուցնէ Օսմանլի աղգին,—
Ո՞վ էր երկուսէն ստրուկ և կամ տէր...
Աշխ, երբ պիտ՝ թնդաք, խեղճ Հայի սրտեր։

1877

ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու.
Երթամ՝ ախոռ, գոմշուկներս լծեմ՝ գութան վարելու։
Դէ՛հ, գոմշուկներ, ելէք, ելէք, արտը երթանք աշխատինք,
Հարկ ու խարճի վատէն մնա է. վրեանք արուն ու քրտինք։

Հայի գութան, Հայի գութան, որի՞ համար կը ջանաս,
Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս.
Այն օր, երբ քեզ ձեռքս առի՝ աղատ օրս կորուցի,
Անվախ սիրտս վհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի։

Բա՛ւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն վերջ ունի,
Դուն տեսա՞ր, որ մեր դուշմանը ամոթ, խելք ու գութ չունի։
Արի փշրեմ ես քու խոփը, տանք դարբինին կռելու,
Կռենք—կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կռուելու։

Եղբարք Հայեր, առէք խոփը, տուէք դարբինին կռելու,
Կռել—կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու։

1877

ԲՈՂՈՔ ԱՌ ԵՒՐՈՊԱ

Ձեռքերս կապած, ոտքերս շղթայ,
Կ'ասէ Եւրոպան. „Հէր չելաք ոտքի.
Ձեզ ազատութիւն, ձեզ օրէնք չի կայ,
Տարէք, կրեցէք դուք կեանք ստրկի„։

Վեց հարիւր տարի մեր երակներէն
Կաթ կաթ ծորեցաւ մեր վերջին արիւն.
Եւրոպան կ'ասէ. „Շուռ գանք Հայերէն,
Հայի մէջ չիկայ ուժ ու քաջութիւն“։

Ամբողջ Հայաստան ասեղ չէր մնացել,
„Հայը, կ'ասեն, ինչո՞ւ թուր չի վերուցին“.
Մեթէ վառօդի հոգս պէտք էր անել։
Թէ՞ պէտք էր բրդել չոր հաց քաղցածին։

Եւրոպ, մոռացա՞ր երբ Զրադաշտը
Ձեռքը թուր՝ կուգար շիտակ քո ծոցը.
Բայց Հայի ահեղ Աւարայր—դաշտը
Շիջուց մոլեռանդ այն կրօնի բոցը։

Եւրոպ, մոռացա՞ր այն կուռ հարուածը,
Որ պատրաստել էր Իսլամ քու որդոց.
Հայը չուզեց քու արտօսր ու լացը,
Քաղաքաց հրդեհ, խողխողանք մարդոց.—

Երկերիւր տարի արիւն թափելով,
Դէմ տուեց ահեղ, ուժգին այն գրոհին,
Մինչև որ ձեր կեանքն դարձաւ ապահով,
Մինչև որ ուժէն ընկաւ թշնամին...

Եւրոպ, մոռացար, երբ քու քաջերը
Անապատի մէջ մնացին քաղցած.
Ի՞նչ պիտ՝ օգնէին նոցա ղէնքերը,
Թէ որ Հայք նոցա չը տային կուշտ հաց։

Ապերախտ Եւրոպ, յիշէ Հայերուն,
Դու շատ մի՛ խաբուիլ սուրի շաչիւնէ.
Արիւն վօթեն չէ՛ առաքինութիւն
Եւ ոչ նա ազատ ոգու նշան է։

Մենք խաղաղութիւն փրկչէն սովրեցանք,
Նեղիչին ներել—Աւետարանէն,
Միթէ մենք այսօր պատուհասեցանք,
Միթէ խաբուեցանք մեր Բարերարէն։

Ինչերո՞ւս էր պէտք առաքինի վարք,
Եթ չեղանք Հայքս սրիկայ, մարդասպան.
Անշո՞ւշտ կը դասէր մեզի ազգի կարգ
Արիւնածարաւ, գոված Եւրոպան։

1877

ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեզի մոռցաւ Հայոց ազգը,
Չի լսեր մեր պաղատանքը,
Տեսնել չուզէ մեր տանջանքը.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Ա՛ստուած, սրտով որ բարի ես,
Մենք վար, Դուն վեր—շատ հեռի ես,
Այժմ ալ խոշոր գործերի ես.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Յոյնը մեզի ասը կ՝ատէ,
Նէմցէն մեզնէ կրօնքով զատ է,
Ֆրանկի բանը, կ՝ասեն, վատ է.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,
Նրան պէտք է լոկ մեր փարան.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Մեր տեղը քաջ կտրիճներ կայ,
Պէտք որ եղաւ՝ ստակ ալ կուգայ,
Մենակ՝ ճամբայ ցուցնող չի կայ.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Հայի դաշտեր, արեւան դաշտեր,
Շատ կուլ տըւիք Հայի քաջեր,
Թէ որ ձեզնէ մէկը ելլէր,—
Մեր գանգատին վերջ կը դնէր։

1877

1001/3413
Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Պետական Գրադարան
7/XI-1922
Ереван, Ленинград
Ա. ՄԱՍՈՒՆԻՆԻ ԱՆՎԱՆ

ՂԱՐԻԲ ՄՇԵՑԻ

—

Ես Մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէն,
Ձեզ շատ բարև բերեր եմ հայի գեղերէն.
Ախպէրքս ինձ ղրկեցին դէպի էս կուման.—
(Մի վախնաք, չուզեմ ձեր մանէթն ու թուման)
Վարագայ Սուրբ Խաչէն բերեր եմ ձեզ լուր.
Խղճացէք հայ աղգիս, տուէք մէկ մէկ թուր:

Հայ աղգը մեր տեղը նեղ օր կը քաշէ,
Օսմանլին ու քիւրդը կեանքերս կը մաշէ.
Օր կը լայ՝ գերեվար կ'անէ մեր տղոց,
Օր կը լայ՝ արտերս ձգէ կրակ ու բոց.
Թէ չօգնէք՝ մենք ալ շուտ կ'լանք ցիր ու ցան.
Խղճացէք հայ աղգիս, տուէք մեզ հրացան:

Սուրբ ժամերս դարձուցին անասնոց կոյանք,
Խորաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք,
Խաչը ոտքով փշրեցին, տեղը դրին լուսնակ.
Խեղճ հայը օրնիբուն ծաղը է ու ծանակ.
Ո՜վ աղբարք, բերեր եմ ձեզ այսպէս սև բօթ,—
Զուզենք մենք ձեր ոսկին, տուէք մեզ վառօդ:

Այսքան շատ տանջանքին ի՞նչպէս դիմանանք,
Մինչև ե՞րբ ձեր դիաց անօգ պիտ՝ մնանք.
Մեր աղգը տէր չունի Սլաւէնի նման,
Բարի՝ դուք ըլլայիք մեզի օգնական.
Հոգիներս տրրորած է, ջաներս ցաւոտ,
Զուզենք մենք ձեր փարան, տուէք թնդանօթ:

Շատ տառապանք քաշեցինք դուշմանի ղէնքէն,

Շատ ալ մահ դուշմանը կերաւ մեր ձեռքէն,
Առանց ատոր աշխարհքը մեր չէր բազմամարդ.
Հիմի փուշ կը բբնի, ուր առաջ էր վարդ.
Բայց մենք ձեր սընդուկի փողին կարօտ չենք,—
Հայ աղբարք, շնորհեցէք դուք մեզ մէկմէկ ղէնք:

1877

ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒՔԸ

—

Դուն խելօք, հաշուով վաճառական ես,
Միւլքդ, փող ու ապրանք, կ'ասեն, շատ ունես.
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, փողիդ ալ վրան:

Քաջ ես, լսել ենք, ինքդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունիս փառաւոր.
Բայց թէ թրէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, թրիդ ալ վրան:

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փռուած է.
Բայց թէ գրչէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, գրչիդ ալ վրան:

Հեռատես մտքով դուն զարդարեցար,
Հզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մտքէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, մտքիդ ալ վրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,

Շատ կը յօրինես թանգագին բաներ.
Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ ձեռքիդ ալ վրան։

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հռչակ ու հանճար.
Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ լեզուիդ ալ վրան։

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովդ լցուած է մարդոց բերան.
Թէ ուսումդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ ուսմանդ ալ վրան։

Կուտամ քեզ պատիւ, կ'ունենաս դու յարգ,
Ու կը դնեմ քեզ ազնիւ մարդոց կարգ.
Երբ օրօրանէդ մինչ ի գերեզման
. . . . ձրգամունքդ լինի Հայաստան։

1878

ՄՇԵՑՈՑ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

—

Երբոր մայրը երկունքով
Աշխարհ բերէ երեխայ,
Հայրը որդուն մի սրած
Պիտի դաշոյն տայ ընծայ։

Երբ երեխան մեծանայ,
Խաղալիկներու փոխան՝

Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահաբեր հրացան։

Երբոր տղին վարժատուն
Գայ ժամանակ երթալու,
Նախ՝ սուր խաղցնել և ապա
Պիտ՝ սովրեցնունք կարդալու։

Կարդալ-գրել լաւ բան է...
Բայց որ հասաւ քննութիւն՝
Աշակերտին հարցուցէք—
Վոթել գիտէ՞ նա արիւն։

Լոկ ղուք այսպէս յուսացէք
Փրկել խղճուկ Հայաստան...
Ազատ, անկախ մարդ երբէք
Լինելու չէ մուրացկան։

1879

ՎԱՆԵՑՈՑ ԶՈՒՆՈՒԱԳԸ

—

Բաւ, է եղբարք, վեղ ճրկել
Ողորմելի երևել
Ժամանակը հասել է
Հայ դրօշակին ծածանել։

Հայոց լերինք թող թնդան,
Հայոց բերանք թող գոռան,
Հայաստանի դաշտերում
Քաջ հայերու զել „ուռան“։

Արիւն վոթէ թող հայը,
Աղաղակէ միշտ ուռա՜.
Մեր թշնամին այսուհետ
Սրտի վախէն թող դողայ։

Այսուհետեւ արտասունք
Վախկոտները թող հեղուն,
Հայքս արդէն պատրաստ ենք
Վոթել ազնիւ մեր արիւն։

Ու չենք դադրիլ վոթելու
Մեր հայ, ազնիւ արիւնը,
Մինչև ազգը չի ստանայ
Իրա ազատութիւնը։

Ախ ու վախը մենք մոռցանք,
Այժըմ գիտենք մենք ուռա՜.
Հա՛յք, գոչեցէք միշտ ուռա,
Որ թշնամին մեր դողայ։

1879

ՀԱՅԻ ԱՐԻՒՆ

—

Փա՜ռք Աստուծոյ, հայ արիւն ալ վոթեցաւ,
Եւրոպայի արեան պասքը յագեցաւ։
Զուզէր գիտնալ, որ աշխարքիս մէջ հայ կայ,
Հայի մէջ ալ մարդկային սիրտ, հոգի կայ,
Երբ հոտոտեց հայի արեան գոլորշին,
Միտքը ձգեց թքած-մրած հայ ազգին։
—Փա՜ռք Աստուծու, հայ արիւն ալ վոթեցաւ,
Եւրոպայի արեան պասքը յագեցաւ։

Արիւն վոթել... Վաղուց մոռցել են մարդիկ
Քստմնելի արեան հեղման արհաւիրքը...
Արիւն վոթել այն չէ, ինչ որ դուք գիտէք...
Բազմաչարչար մեռածներուն հարցուցէք.
Հարցուցէք դուք որդեկորոյս հայ կընկան—
Ի՞նչ ասել է տեսնել հեղումը արեան...
Փա՜ռք Աստուծու, հայ արիւն ալ վոթեցաւ,
Եւրոպայի արեան պասքը յագեցաւ։

Տեսնե՞լ ես դու հօրդ վզին պինդ չուան
Ու քաշաքաշ տարած մինչի կախաղան.
Տեսնե՞լ ես դու գիրկը տղան քու մօրը,
Անգութ Տաճկի սուրը երկուսի փորը.
Դու տեսնե՞լ ես կոյս քրոջդ նոր փրթթած,
Տուփոտ Տաճկից կուսութենէն իր զրկած.
—Փա՜ռք Աստծու, հայ արիւն ալ վոթեցաւ,
Եւրոպայի արեան պասքը յագեցաւ։

Բայց դու, հայ-մարդ, մինչև երբ պիտ՝ համբերես,
Ազգաց, ազանց առջև մնալով սեւերես.
Մի՞թէ ցայն օր պիտի մնաս անզգայ,
Որ ասեն քեզ „Ա՛լ աշխարքս հայ չըկայ“...
Էջմիածի՜ն, դէ՛հ, հանէ՛ քու ցուցակէն
Վեց հազար հայ—այժմ սև հողի տակ են...
Վերջ ի վերջոյ՝ հայ արիւն ալ վոթեցաւ,
Եւրոպ, արդեօք արեան պասքդ յագեցա՞ւ։

1879

Մեծ

Գնա՛, իմ որդեակ, աշխարքս անցիր,
Պանծալի անուն Մեծի դու ստացիր։

Ու գնաց որդին, շատ քրտինք թափեց,
Մեծ հարստութիւն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

Չէ՛, չէ՛. թէև դու բօրսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակաւին մեծ մարդ։

Նա գնաց մտաւ խմաստնոց տաճար,
Եղաւ խորիմաստ գիտուն ու հանճար,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

Չէ՛, չէ՛. թէև դու գիտութեանց ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։

Պահով, աղօթքով մտաւ անապատ,
Քուրձ հագաւ մարմնուն, հրաշքներ գործեց շատ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

Եդեմայ դրախտին էլ լինիս դու զարդ,
Ես քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։

Ու գնաց որդին, դարձաւ զօրավար,
Խելքով, քաջութեամբ տիրեց շատ աշխարհ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

Չէ՛, չէ՛. թէև դու գոռ դաշտին ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։

Ու գնաց որդին մի երկիր օտար,
Հրեշք ու ցաւերէ մաքրեց այն աշխարհ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

Օտար աշխարհի թէև եղար զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։

Ու գնաց որդին... հա՜, սարն էր գլորման...
Դէմ տուեց ուսը, չը թողեց անկման...
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

Դիւցազների մէջն էլ լինիս դու զարդ,
Բայց քա՜ւ ինձ ասել քեզ համար մեծ մարդ։

Ու գնաց որդին գլխակոր, տրտում.
Հոգին վրդոված, ցաւ ու դարդ սրտում,
Մաշվում էր խեղճը, զօռ տալով խելքին—
Հէ՞ր չ'արժանացաւ հօր գովասանքին...

Նորա եղբայրը գերի էր տարած,
Թշնամու ձեռքով տունը աւերած.
Ճիգ արաւ, գլուխը վտանգի ձգեց,
Ազատեց եղբօրն ու տունը կանգնեց...

Ցանկարծ... սար ու ձոր, ծով դղրդեցան,
Բիւրք բիւրուց բերնով գոչեց ազգ մարդկան.
„Մեծ մարդու անուն դու այժմ ստացար...
„Եղբօրդ յիշեցիր ու քեզ մոռացար։“

1880

Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ...

—

„Ի՞նչ անենք“... Ամոթ այսպէս ասողին,
Ամոթ, բիւր ամոթ յուսահատուողին,
Մա՜հ, մա՜հ, հաղա՜ր մահ հէգ վհատուողին...
Եղբարք, ալ չասենք. „Հայեր, ի՞նչ անենք“:

Ասէք՝ ի՞նչ կ'անէ ջուրը ընկածը,
Ասէք՝ ի՞նչ կ'անէ քաղցած-սոված,
Ասէք՝ ի՞նչ կ'անէ գերի ընկածը...
Եղբարք, ալ չասենք. „Հայեր, ի՞նչ անենք“:

Ջրամոյնք ճգնին՝ քանի ուժ ունին,
Քաղցածը մաշէ շեմքը դրացիին,
Փախչել կը հնարի կաշկանդած գերին...
Եղբարք, ալ չասենք. „Հայեր, ի՞նչ անենք“:

Հարուստ, հէր ոսկիդ անգուկ դրել ես,
Կարիճ, ո՞ր օրուայ ուժդ պահել ես,
Առ ի՞նչ, ազգասէր, ազգդ սիրել ես...
Եղբարք, ալ չասենք. „Հայեր, ի՞նչ անենք“:

Հարուստ, դիմացդ է ազնիւ ասպարէզ,
Հայրենին լաւ է, քան թէ ոսկու դէզ,
Թէ մեռնիս՝ ոսկիդ հնոտ կը տանես...
Եղբարք, ալ չասենք. „Հայեր, ի՞նչ անենք“:

Կարիճ, ալ կ'անցնի քանի մի տարի,
Այդ թշուդ վարդը խպառ կը խամրի.
Չի թողուիր միայն յիշատակ բարի...
Եղբարք, ալ չասենք. „Հայեր, ի՞նչ անենք“:

Հայը կըստիպէ վերհ պատրիարքին
Յորդորակ սփռել բոլոր հայ ազգին,
Թոթուել-զարթեցնել մեր թմրած հոգին...
Եղբարք, ալ չասենք. „Հայեր, ի՞նչ անենք“:

Թէ ուզէ հայը՝ նա շատ բան կ'անէ,
Եղբարք, ալ չասենք. „Հայեր, ի՞նչ անենք“:
1881

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

—

Արի, իմ սոխակ, թող պարտէզ, մերին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, աբեղաձագ, թող արտ ու արօտ,
Օրօրէ՛ տղիս, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ:

Թող դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վուվույով տըղիս բեր անուշ քունը,
Բայց նա լալիս է. տատրակիկ մի՛ գալ
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաչաղակ, ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սովդաքար դառնալ:

Թող որդ, արի, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ։

1881

ԱՌԻԻԾԻ ՍԹԱՓՈՒՄԸ

—

Այդ ծանր լուծը մինչև երբ կրէք—
Դարաւոր լուծը անգութ չար Տաճկաց,
Սարկի կեանքին մինչ երբ համբերէք
Ու ծանակ լինիք դուք օտար ազգաց։

Մինչև երբ ձեր սուրբ սեղան ու խորան,
Գերեզմանք, մատրուանք, սուրբ եկեղեցիք—
Պիտ լինին քուրդի պիղծ ոտից կոխան,
Մինչ երբ ձեր վրայ պիտ թքնեն մարդիկ։

Մինչև երբ անմեղ, մաքուր հայ կոյսեր,
Մինչև երբ պարկեշտ, ամօթխած կնանիք
Պիտ լցնեն թուրքաց զաղիր հարէմներ.—
Այս նուաստ կեանքը մինչ երբ պիտ տանիք։

Մինչ երբ վաստակիք արիւն-քրտինքով
Ու անտանելի բեռի տակ թեքվիք,
Մինչ երբ պիտ լակէ սոսկալի ձեզ սով,
Մինչ երբ կողոպտուիք, մինչ երբ կեղեքուիք։

Մինչև երբ պիտի պարզամիտ լինիք,
Ու անասունէն օր անցնուք դուք վատ,
Մինչ երբ խոստմունքով դուք պիտի խաբուիք,—
Չի մնաց ձեր մէջ ոչ յոյս, ոչ հաւատ...

Չի հասաւ ժամը, ժամը սոսկալի,
Սոսկալի վրիժու, արդար հատուցման,
Վերջին ժամ՝ ամեն հայի ցանկալի—
Կենաց ժամ և կամ ժամ ազնիւ մահուան։

Դէհ, եղէք, հայեր, ոտքի կանգնեցէք,
Ահա թշնամին կայ ձեր յանդիման,
Ջլոտ ձեր բազկաց ուժը փորձեցէք,
Ինչպէս սովրեցուց ձեզ քաջն Վարդան։

Գիտեմ՝ զէնք չունիք. բայց մի՛ սարսափիք,
Առէք ինչ հանդիպ կայ՝ կացին, խոփ, բահ,
Սուտ-պարծուկ և ոչ արի է Տաճիկ,
Հուժկու ձեռքերով արէք խեղդամահ։

Գիտեմ՝ անտէր էք, չունիք կարեկից.
Բայց մի՛ վհատիք ու մի՛ սոսկացէք,
Սէրն ազատութեան է ձեր զինակից,
Յուսով փրկութեան քաջալերուեցէք։

Ո՞ւր և կոխէք ոտք՝ մահ սերմանեցէք,
Ցմահ կռուեցէք, հարէք անխնայ.
Գոռ դաշտէն—մի՞թէ երբէք լսած չէք,
Որ—ստրուկն ազատ մարդ կըվերադառնայ...

Ու գոռաց երկինք, գոռացին սարեր,
Հա՛ ծածանեցաւ հայկական դրօշակ,
Արեամբ լցուեցան հայրենեաց ձորեր—
Շուտ ազատութեան է բարի գուշակ։

Ահա՛ ոսոխներ իրար դիպեցան—
Վարձկան դահիճներ ու ազատ որեար...
Հայ քեզ ըլկողին արա ցիր ու ցան.
Հայ, արագ շարժէ մանգաղ ու տապար։

Հայ-մարդ, պտիկ ճիգ, էլի պտիկ գրոհ,
Ջարդ բուրդ արա, մի՛ կորցնուլ յոյս, հաւատ,
Էլի՛ փոքր ինչ մահ, էլի՛ փոքր ինչ զոհ,
Եւ... սուրբ Հայաստան կը կանգնի ազատ։

1887

ԿԱՐԻՆԻ ՍՈԽԱԿ

Մի երգիլ իմ սոխակ,
Պատուհանիս դու տակ,
Արտորա՛ դէպ Կարին
Սփոփել խեղճ հայերին։

Նորա տունն է քանդած,
Ջաւակունք կոտորած.
Արտորա՛ դէպ Կարին
Սփոփել խեղճ հայերին։

Կարին կը հառաչէ,
„Օգնեցէ՛ք“, կը կանչէ.—
Արտորա՛ դէպ Կարին
Սփոփել խեղճ հայերին։

Տաս հազար այնալու
Կրնայ մեզ փրկելու.
Արտորա՛ դէպ Կարին
Սփոփել խեղճ հայերին։

Մի օր շատ կը ցաւիք,
Որ օգնել չուզեցիք.
Արտորա՛ դէպ Կարին
Սփոփել խեղճ հայերին։

Դէպ Կարին, հայ եղբայր,
Մինչ կորած չէ՛ խսպառ.
Արտորանք դէպ Կարին,
Ազատել հայերին։

1890

ՀԱՅ ՁԻՆՈՒՈՐ

Մասսի ճակատին ամպրոպ պատռեցաւ,
Հայերուս սրտէն վախ փարատեցաւ,
Նժոյգ է տակս, ձեռիս այնալու,
Սուլթան, ունիս ուժ ինձ դիմանալու.
—Սորուկ եմ եկել կը դառնամ ազատ,
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ։

Անսուտ երդումով ուխտել եմ ազգիս—
Զոհել մարմինս, զոհել և հոգիս,
Արհամարհել սով և անդորրութիւն,
Տալ Հայաստանին սուրբ ազատութիւն.
—Սորուկ եմ եկել կը դառնամ ազատ,
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ։

Էլ ես ահ չունիմ քու վախկոտ զօրքէն,
Ջղուած եմ ես քու շարեալթ օրէնքէն.
Մշու դաշտերը, Վան ու Արզրում
Կ'լուանան Տաճկի սև ու պիղծ արիւն.
—Սորուկ եմ եկել կը դառնամ ազատ,
Յետ խլած քեզմէն հողն իմ հարազատ։

Թշուառ, քու յոյսն է Զէյթէնն ու Քուրդը—
Հա՜, մէկ քամիին տամ նոցա բուրդը.

Զեռքիս ունիմ ես Ղևոնդի լախտը,
Որ ջարդեմ-փշրեմ քու փտած թախտը.
Սուլթան, սիրտ ունիս, իջիր մարտի դաշտ,
Տե՛ս, քու առջևն է թշնամիդ անհաշտ։

1891

ՅՈՅՍ

Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Ո՛րքան որ կ'ուզէ թող փչէ հիւսիս,
Յուսով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գ

Թուխպը թող պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թող փակէ,
Տարերք աշխարհիս խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ-ուշ, արև պիտ ծագէ։

Թող գայ փորձութիւն, թող գայ հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն հային տառապանք—
Միայն... չի հատնէր խղճուկի յ ո յ ս ը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0357082

49719

ԱԶԱՏ-ԳՐԱԳԱՐԱՆ

Խմբագրութեամբ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՕՐ ԿՈՄԻՏԷԻ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

	գին ը, սանտ.
1) Ա.ԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ	20
2) Ա.ՊՍՏԱՄԲ ՍԱՍՈՒՆԸ	20
3) ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ՏԱՂԵՐԸ	20
4) ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻՆ	20
5) ՀԵՐՈՍԸ	20

(Պատրաստուում են այլ գրքեր)

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ, հայատառ, (չուտով կը վաճառանուի)։

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

7) Ed. Bernstein. **Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas** . Fr. 0.50

8) — **Les souffrances du Peuple arménien et le devoir de l'Europe** . . . . » 0.40

9) Alb. Vandal. **Les Arméniens et la Réforme de la Turquie** . . . . . » 0.20

10) Francis de Pressensé. **L'Arménie et la Macédoine** . . . . . » 0.20

11) Georg Brandès. — **Armenien und Europa** . . . . . » 0.20

Adresse : *Union des Étudiants Arméniens de l'Europe*
rue de l'Ecole-de-Chimie, 2, **Genève** (Suisse).

GENÈVE - IMP. A. STUDER - R. FONC-PRINT DE PLAINPALAIS